ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք հեռ. (0222) 65203
էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 ապրիլի 2023 թվականի N 31-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 13-Ի ԵՐԿՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԹԻՎ 5 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի՝ ***ավագանին որոշում է.***

Հաստատել Բյուրեղավան համայնքի ավագանու 2023 թվականի ապրիլի 13-ի երկրորդ նստաշրջանի հերթական թիվ 5 նիստի հետևյալ օրակարգը՝

1.Բյուրեղավան համայնքի 2023 թվականի բյուջեի առաջին եռամսյակի կատարման ընթացքի մասին:

2.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի սեփականություն հանդիսացող հողամասն ուղղակի վաճառքի ձևով օտարելու մասին:

3.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի սեփականություն հանդիսացող գույքն ուղղակի վաճառքի ձևով օտարելու մասին:

4. Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին:

5.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերն աճուրդային կարգով օտարելու և մեկնարկային գները հաստատելու մասին:

6.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան քաղաքի Սամվել Վարդանյան փողոց 24 շենքի 32 բնակարանը Արկադի Արամի Հարությունյանի ընտանիքին անհատույց օտարելու մասին:

7.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 19-ի N 84-Ա որոշման մեջ լրացումներ կատարելու մասին:

8. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 19-ի N 75-Ա և 76-Ա որոշումների մեջ փոփոխություններ կատարելու մասին:

9.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու երկրորդ նստաշրջանի հերթական նիստի գումարման օրը սահմանելու մասին:

Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ – 9

ԲԱԼԱՍՅԱՆ ՀԱԿՈԲ

ԴԱՆԻԵԼՅԱՆ ԴԱՆԻԵԼ

ՍՈՒՔԻԱՍՅԱՆ ԱՐՓԻՆԵ

ՊԻՃԻԿՅԱՆ ԷԴԻԿ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԿԱՐԱՊԵՏ

ՍՈՒՔԻԱՍՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՎԱՐԴԵՎԱՆՅԱՆ ՎԼԱԴԻՄԻՐ

ՍԱՀԱԿՅԱՆ ԱՎԱԳ

ՄԱՐՈՒՔՅԱՆ ԱՇԽԵՆ

Դեմ – 0

Ձեռնպահ – 0

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՀԱԿՈԲ ԲԱԼԱՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք հեռ. (0222) 65203
էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 ապրիլի 2023 թվականի N 32-Ա

ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ և 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետերի և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 35–րդ հոդվածի 1-ին մասի՝ ***ավագանին որոշում է.***

1.Ի գիտություն ընդունել Բյուրեղավան համայնքի ղեկավարի հաղորդումը 2023 թվականի բյուջեի առաջին եռամսյակի կատարման ընթացքի մասին՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ – 6

ԲԱԼԱՍՅԱՆ ՀԱԿՈԲ

ԴԱՆԻԵԼՅԱՆ ԴԱՆԻԵԼ

ՍՈՒՔԻԱՍՅԱՆ ԱՐՓԻՆԵ

ՊԻՃԻԿՅԱՆ ԷԴԻԿ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԿԱՐԱՊԵՏ

ՍՈՒՔԻԱՍՅԱՆ ՎԱՐԴԱՆ

Դեմ – 0

Ձեռնպահ – 3

ՎԱՐԴԵՎԱՆՅԱՆ ՎԼԱԴԻՄԻՐ

ՍԱՀԱԿՅԱՆ ԱՎԱԳ

ՄԱՐՈՒՔՅԱՆ ԱՇԽԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀԱԿՈԲ ԲԱԼԱՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք հեռ. (0222) 65203
էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 ապրիլի 2023 թվականի N 33-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՁԵՎՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հողային օրենսգրքի 51-րդ և 66-րդ հոդվածների, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի, հաշվի առնելով այն հանգամանքը, որ օտարվող հողամասի վրա առկա է սեփական շինություն, հիմք ընդունելով ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը, N 1078104 սեփականության վկայականը, շինության սեփականատեր Արմիկ Աշոտի Ալեքսանյանի դիմումն ու համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ ***ավագանին որոշում է.***

1.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի սեփականություն հանդիսացող Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան քաղաք Բյուրեղավան Սարալանջ թաղամաս 1-ին փողոց 36/1 հասցեում գտնվող 0.0095 հա (կադաստրային ծածկագիր 07-003-0040-0028, սեփականության վկայական N 1078104, տրված՝ 2006 թվականի մարտի 02-ին) բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասն ամբողջ կադաստրային արժեքով՝ 421980 (չորս հարյուր քսանմեկ հազար ինն հարյուր ութսուն) դրամով, ուղղակի վաճառքի ձևով օտարել շինության սեփականատեր Արմիկ Աշոտի

Ալեքսանյանին (անձնագիր՝ AU0531546, տրված՝ 2021 թվականի դեկտեմբերի 01-ին, 059-ի կողմից):

2.Սույն որոշման 1-ին կետում նշված հողամասը դուրս գրել Բյուրեղավան համայնքի հաշվեկշռից:

3.Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի առուվաճառքի պայմանագրի նոտարական վավերացման և գրանցման հետ կապված վճարները կատարվում է Արմիկ Աշոտի Ալեքսանյանի կողմից:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ – 6

ԲԱԼԱՍՅԱՆ ՀԱԿՈԲ

ԴԱՆԻԵԼՅԱՆ ԴԱՆԻԵԼ

ՍՈՒՔԻԱՍՅԱՆ ԱՐՓԻՆԵ

ՊԻՃԻԿՅԱՆ ԷԴԻԿ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԿԱՐԱՊԵՏ

ՍՈՒՔԻԱՍՅԱՆ ՎԱՐԴԱՆ

Դեմ – 0

Ձեռնպահ – 3

ՎԱՐԴԵՎԱՆՅԱՆ ՎԼԱԴԻՄԻՐ

ՍԱՀԱԿՅԱՆ ԱՎԱԳ

ՄԱՐՈՒՔՅԱՆ ԱՇԽԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀԱԿՈԲ ԲԱԼԱՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք հեռ. (0222) 65203
էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 ապրիլի 2023 թվականի N 34-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՁԵՎՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հողային օրենսգրքի 51-րդ, 57-րդ և 66-րդ հոդվածների, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 6-րդ կետի, 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 34-րդ և 34.2-րդ կետերի, 35-րդ կետի «դ» ենթակետի և հիմք ընդունելով Սերոբ Էդվարդի Անտինյանի դիմումն ու համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ ***ավագանին որոշում է.***

1.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի սեփականություն հանդիսացող (սեփականության վկայական N 15032023-07-0171) Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան գյուղ Նուռնուս Շինարար թաղամասի 3-րդ փողոց 18/1 հասցեում գտնվող 6.4 քմ մակերեսով բնակելի նպատակային նշանակության (գործառնական նշանակությունը՝ պարիսպ) պարիսպը 9110 (ինն հազար մեկ հարյուր տասը) դրամով և դրա զբաղեցրած 0.02536 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը (կադաստրային ծածկագիր՝ 07-051-0158-0093) 476190 (չորս հարյուր յոթանասունվեց հազար մեկ հարյուր իննսուն) դրամով ուղղակի վաճառքի ձևով օտարել կառույցն իրականացրած Կոտայքի մարզ քաղաք Աբովյան Հանրապետության

փողոց 1/5 շենք 19 բնակարանի բնակիչ Սերոբ Էդվարդի Անտինյանին (նույնականացման քարտ՝ 010263135, տրված 2017 թվականի դեկտեմբերի 03-ին, 058-ի կողմից):

2. Սույն որոշման 1-ին կետում նշված գույքը դուրս գրել Բյուրեղավան համայնքի հաշվեկշռից:

3.Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված գույքի առուվաճառքի պայմանագրի վավերացման և գրանցման հետ կապված վճարները կատարվում է Սերոբ Էդվարդի Անտինյանի կողմից:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ – 6

ԲԱԼԱՍՅԱՆ ՀԱԿՈԲ

ԴԱՆԻԵԼՅԱՆ ԴԱՆԻԵԼ

ՍՈՒՔԻԱՍՅԱՆ ԱՐՓԻՆԵ

ՊԻՃԻԿՅԱՆ ԷԴԻԿ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԿԱՐԱՊԵՏ

ՍՈՒՔԻԱՍՅԱՆ ՎԱՐԴԱՆ

Դեմ – 0

Ձեռնպահ – 3

ՎԱՐԴԵՎԱՆՅԱՆ ՎԼԱԴԻՄԻՐ

ՍԱՀԱԿՅԱՆ ԱՎԱԳ

ՄԱՐՈՒՔՅԱՆ ԱՇԽԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀԱԿՈԲ ԲԱԼԱՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք հեռ. (0222) 65203
էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 ապրիլի 2023 թվականի N 35-Ա

ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի, 7-րդ հոդվածի 9-րդ և 15-րդ մասերի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի, «Քաղաքաշինության մասին» օրենքի 14^3-րդ հոդվածի և հիմք ընդունելով Ռիմմա Սարգիսի Կաղյանի լիազորված անձ Սարգիս Հարությունի Օսիպյանի 2023 թվականի մարտի 13-ի դիմումը՝ ***ավագանին որոշում է.***

1.Ռիմմա Սարգիսի Կաղյանին սեփականության իրավունքով պատկանող (սեփականության վկայական N 31032022-07-0095) Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի Նուռնուս գյուղում գտնվող 07-051-0214-0007 կադաստրային ծածկագրով 0.2358 հեկտար մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության, վարելահող գործառնական նշանակության հողամասի նպատակային նշանակությունը փոխել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության, գործառնական նշանակությունը՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների՝ (անասնապահական տնտեսություն կառուցելու նպատակով):

2.Սահմանել, որ հողամասի նպատակային նշանակությունը փոխված է համարվում պարզեցված կարգով միայն սեփականատիրոջ դիմումի համաձայն համայնքի ավագանու կողմից այդ հողամասի նպատակային նշանակությունը փոխելու և համայնքի ղեկավարի կողմից տվյալ հողամասի ճարտարապետահատակագծային առաջադրանքը տրամադրելու մասին սահմանված կարգով կայացված որոշումներն ուժի մեջ մտնելուց և

հողամասի նկատմամբ փոխված նպատակային նշանակությամբ իրավունքները պետական գրանցում ստանալուց հետո:

3.Բյուրեղավան համայնքի ղեկավարին՝

1)սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի նպատակային նշանակության փոփոխության մասին 10-օրյա ժամկետում օրենսդրությամբ սահմանված կարգով տեղեկացնել Կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանմանը և Հայաստանի Հանրապետության Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնին՝ կցելով սույն որոշման սահմանված կարգով հաստատված պատճենները.

2)սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի նպատակային նշանակության փոփոխությունը պետական գրանցում ստանալուց հետո ներառել ընթացիկ տարվա հողային հաշվեկշռում:

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ – 9

ԲԱԼԱՍՅԱՆ ՀԱԿՈԲ

ԴԱՆԻԵԼՅԱՆ ԴԱՆԻԵԼ

ՍՈՒՔԻԱՍՅԱՆ ԱՐՓԻՆԵ

ՊԻՃԻԿՅԱՆ ԷԴԻԿ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԿԱՐԱՊԵՏ

ՍՈՒՔԻԱՍՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՎԱՐԴԵՎԱՆՅԱՆ ՎԼԱԴԻՄԻՐ

ՍԱՀԱԿՅԱՆ ԱՎԱԳ

ՄԱՐՈՒՔՅԱՆ ԱՇԽԵՆ

Դեմ – 0

Ձեռնպահ – 0

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՀԱԿՈԲ ԲԱԼԱՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք հեռ. (0222) 65203
էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 ապրիլի 2023 թվականի N 36-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի 3-րդ մասի և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ ***ավագանին որոշում է.***

1.Համաձայնություն տալ Բյուրեղավան համայնքի ղեկավարի առաջարկությանը աճուրդային (դասական աճուրդ) կարգով Բյուրեղավան համայնքի սեփականություն հանդիսացող Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան քաղաք Բյուրեղավան 1-ին թաղամաս 25 հասցեի 0.0183 հեկտար մակերեսով (վկայական՝ N 16032023-07-0127, կադաստրային ծածկագիրը՝ 07-003-0018-0100), 26 հասցեի 0.021 հեկտար մակերեսով (վկայական՝ N 16032023-07-0232, կադաստրային ծածկագիրը՝ 07-003-0018-0101), 60 հասցեի 0.003199 հեկտար մակերեսով (վկայական՝ N 16032023-07-0218, կադաստրային ծածկագիրը՝ 07-003-0018-1042), 61 հասցեի 0.003199 հեկտար մակերեսով (վկայական՝ N 16032023-07-0128, կադաստրային ծածկագիրը՝ 07-003-0018-1043), 62 հասցեի 0.003198 հեկտար մակերեսով (վկայական՝ N 16032023-07-0109, կադաստրային ծածկագիրը՝ 07-003-0018-1038), 63 հասցեի 0.003198 հեկտար մակերեսով (վկայական՝ N 16032023-07-0095, կադաստրային ծածկագիրը՝ 07-003-0018-1040), 64 հասցեի 0.003198 հեկտար մակերեսով (վկայական՝ N 16032023-07-0135, կադաստրային ծածկագիրը՝ 07-003-0018-1037), 65 հասցեի

0.003197 հեկտար մակերեսով (վկայական՝ N 16032023-07-0172, կադաստրային ծածկագիրը՝ 07-003-0018-1050), 66 հասցեի 0.003197 հեկտար մակերեսով (վկայական՝ N 16032023-07-0150, կադաստրային ծածկագիրը՝ 07-003-0018-1049), 67 հասցեի 0.003197 հեկտար մակերեսով (վկայական՝ N 16032023-07-0147, կադաստրային ծածկագիրը՝ 07-003-0018-1039), 68 հասցեի 0.009594 հեկտար մակերեսով (վկայական՝ N 16032023-07-0143, կադաստրային ծածկագիրը՝ 07-003-0018-1041), 69 հասցեի 0.009594 հեկտար մակերեսով (վկայական՝ N 16032023-07-0190, կադաստրային ծածկագիրը՝ 07-003-0018-1051), 70 հասցեի 0.009594 հեկտար մակերեսով (վկայական՝ N 16032023-07-0149, կադաստրային ծածկագիրը՝ 07-003-0018-1048), 71 հասցեի 0.009594 հեկտար մակերեսով (վկայական՝ N 16032023-07-0160, կադաստրային ծածկագիրը՝ 07-003-0018-1052), 72 հասցեի 0.00877 հեկտար մակերեսով (վկայական՝ N 16032023-07-0192, կադաստրային ծածկագիրը՝ 07-003-0018-1046), 73 հասցեի 0.01223 հեկտար մակերեսով (վկայական՝ N 16032023-07-0231, կադաստրային ծածկագիրը՝ 07-003-0018-1045) բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության և Ջրաբեր գյուղի 4-րդ փողոց 7 հասցեի 0.02 հեկտար մակերեսով (վկայական՝ N 15032023-07-0183, կադաստրային ծածկագիրը՝ 07-055-0206-0007) էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների նպատակային նշանակության, կապի գործառնական նշանակության հողամասերը օտարելու համար:

2.Հաստատել սույն որոշման 1-ին կետում նշված հողամասերի մեկնարկային գները՝ համաձայն հավելվածի:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ – 6

ԲԱԼԱՍՅԱՆ ՀԱԿՈԲ

ԴԱՆԻԵԼՅԱՆ ԴԱՆԻԵԼ

ՍՈՒՔԻԱՍՅԱՆ ԱՐՓԻՆԵ

ՊԻՃԻԿՅԱՆ ԷԴԻԿ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԿԱՐԱՊԵՏ

ՍՈՒՔԻԱՍՅԱՆ ՎԱՐԴԱՆ

Դեմ – 0

Ձեռնպահ – 3

ՎԱՐԴԵՎԱՆՅԱՆ ՎԼԱԴԻՄԻՐ

ՍԱՀԱԿՅԱՆ ԱՎԱԳ

ՄԱՐՈՒՔՅԱՆ ԱՇԽԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀԱԿՈԲ ԲԱԼԱՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք հեռ. (0222) 65203
էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 ապրիլի 2023 թվականի N 37-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԱՄՎԵԼ ՎԱՐԴԱՆՅԱՆ ՓՈՂՈՑ 24 ՇԵՆՔԻ 32 ԲՆԱԿԱՐԱՆԸ ԱՐԿԱԴԻ ԱՐԱՄԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԻՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Քաղաքացիական օրենսգրքի 594-596-րդ հոդվածների, հիմք ընդունելով Բյուրեղավան համայնքի սեփականություն հանդիսացող բնակելի տների և ոչ բնակելի տարածքների, հանրակացարանների պահպանման, օտարման և բնակարանային հարցերով զբաղվող հանձնաժողովի առաջարկությունն ու Արկադի Արամի Հարությունյանի դիմումը՝ ***ավագանին որոշում է.***

1.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի սեփականություն հանդիսացող Բյուրեղավան քաղաքի Սամվել Վարդանյան փողոց 24 շենքի 92.60 քմ ընդհանուր մակերեսով 32 բնակարանը անհատույց օտարել (նվիրել) Արկադի Արամի Հարությունյանի ընտանիքին.

ընդհանուր բաժնային սեփականատերեր համարել՝

Արկադի Արամի Հարությունյանին՝ ծնված 1948 թվականին,

Ռուզաննա Արկադիի Հարությունյանին՝ ծնված 1972 թվականի նոյեմբերի 26-ին,

Թամարա Արկադիի Հարությունյանին՝ ծնված 1974 թվականի փետրվարի 03-ին:

2.Սահմանել, որ սույն որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպման և պետական գրանցման հետ կապված վճարների ու տուրքերի վճարումը կատարվում է Արկադի Արամի Հարությունյանի կողմից:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ – 9

ԲԱԼԱՍՅԱՆ ՀԱԿՈԲ

ԴԱՆԻԵԼՅԱՆ ԴԱՆԻԵԼ

ՍՈՒՔԻԱՍՅԱՆ ԱՐՓԻՆԵ

ՊԻՃԻԿՅԱՆ ԷԴԻԿ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԿԱՐԱՊԵՏ

ՍՈՒՔԻԱՍՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՎԱՐԴԵՎԱՆՅԱՆ ՎԼԱԴԻՄԻՐ

ՍԱՀԱԿՅԱՆ ԱՎԱԳ

ՄԱՐՈՒՔՅԱՆ ԱՇԽԵՆ

Դեմ – 0

Ձեռնպահ – 0

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՀԱԿՈԲ ԲԱԼԱՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք հեռ. (0222) 65203
էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 ապրիլի 2023 թվականի N 38-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 19-Ի N 84-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի՝ ***ավագանին որոշում է.***

1.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 19-ի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու մշտական գործող հանձնաժողովներ ստեղծելու, դրանց կազմը հաստատելու մասին» N 84–Ա որոշման 1-ին կետում կատարել հետևյալ լրացումները՝

1) 1-ին ենթակետը լրացնել նոր «դ» պարբերությամբ.

«դ. Լիանա Գևորգյան,».

2) 2-րդ ենթակետը լրացնել նոր «ե» պարբերությամբ.

«ե. Վալենտինա Կաղիյան,».

3) 3-րդ ենթակետը լրացնել նոր «դ» պարբերությամբ.

«դ. Արմեն Սարգսյան»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ – 5

ՊԻՃԻԿՅԱՆ ԷԴԻԿ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԿԱՐԱՊԵՏ

ՎԱՐԴԵՎԱՆՅԱՆ ՎԼԱԴԻՄԻՐ

ՍԱՀԱԿՅԱՆ ԱՎԱԳ

ՄԱՐՈՒՔՅԱՆ ԱՇԽԵՆ

Դեմ – 2

ՍՈՒՔԻԱՍՅԱՆ ԱՐՓԻՆԵ

ՍՈՒՔԻԱՍՅԱՆ ՎԱՐԴԱՆ

Ձեռնպահ – 2

ԲԱԼԱՍՅԱՆ ՀԱԿՈԲ

ԴԱՆԻԵԼՅԱՆ ԴԱՆԻԵԼ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀԱԿՈԲ ԲԱԼԱՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք հեռ. (0222) 65203
էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 ապրիլի 2023 թվականի N 39-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 19–Ի N 75-Ա ԵՎ 76-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ և 35-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետերի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ ***ավագանին որոշում է.***

1.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 19-ի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավանի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը հաստատելու մասին» N 75-Ա որոշման հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն N 1 հավելվածի:

2.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 19-ի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավանի համայնքապետարանի աշխատակազմի 2023 թվականի աշխատողների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» N 76-Ա որոշման հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն N 2 հավելվածի:

3.Համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություններ կատարելու առաջարկությամբ

մեկշաբաթյա ժամկետում սահմանված կարգով դիմել Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմին:

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից, բացառությամբ սույն որոշման 1-ին և 2-րդ կետերի, որոնք ուժի մեջ են մտնում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի կողմից համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություններ կատարելու մասին իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահից:

Կողմ – 6

ԲԱԼԱՍՅԱՆ ՀԱԿՈԲ

ԴԱՆԻԵԼՅԱՆ ԴԱՆԻԵԼ

ՍՈՒՔԻԱՍՅԱՆ ԱՐՓԻՆԵ

ՊԻՃԻԿՅԱՆ ԷԴԻԿ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԿԱՐԱՊԵՏ

ՍՈՒՔԻԱՍՅԱՆ ՎԱՐԴԱՆ

Դեմ – 0

Ձեռնպահ – 3

ՎԱՐԴԵՎԱՆՅԱՆ ՎԼԱԴԻՄԻՐ

ՍԱՀԱԿՅԱՆ ԱՎԱԳ

ՄԱՐՈՒՔՅԱՆ ԱՇԽԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀԱԿՈԲ ԲԱԼԱՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք հեռ. (0222) 65203
էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 ապրիլի 2023 թվականի N 40-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԵՐԿՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասի՝ ***ավագանին որոշում է.***

1.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու երկրորդ նստաշրջանի հերթական նիստի գումարման օր և ժամ սահմանել 2023 թվականի մայիսի 12-ը, ժամը՝ 17:00-ն:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ – 9

ԲԱԼԱՍՅԱՆ ՀԱԿՈԲ

ԴԱՆԻԵԼՅԱՆ ԴԱՆԻԵԼ

ՍՈՒՔԻԱՍՅԱՆ ԱՐՓԻՆԵ

ՊԻՃԻԿՅԱՆ ԷԴԻԿ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԿԱՐԱՊԵՏ

ՍՈՒՔԻԱՍՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՎԱՐԴԵՎԱՆՅԱՆ ՎԼԱԴԻՄԻՐ

ՍԱՀԱԿՅԱՆ ԱՎԱԳ

ՄԱՐՈՒՔՅԱՆ ԱՇԽԵՆ

Դեմ – 0

Ձեռնպահ – 0

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀԱԿՈԲ ԲԱԼԱՍՅԱՆ